ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի մարտի 4-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/2-2 պայմանագրում 2020 թվականի հուլիսի 21-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

1) Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 02.07.2020թ-ի N 1128-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրում և Պայմանագրի բոլոր հավելվածներում կատարվել է անվանման փոփոխություն:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 կետ:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

04.03.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/2-2 գնման պայմանագրի

ք. Երևան << 21 >> հուլիսի 2020թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Համաշինախագիծ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Հ. Լևոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 02.07.2020թ. N 1128-Ն որոշումը և կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 04.03.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/2-2 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրում և Պայմանագրի բոլոր հավելվածներում <<Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ>> բառերը փոխարինել <<Հանրակրթական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների մարզադահլիճների վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ>> բառերով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011034692, 900011034700,
900011034718, 900011034726, 900011034734,
900011034742, 900011034759
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Համաշինախագիծ>> ՍՊԸ
ք. Երևան, Սաֆարյան փողոց, 3 նրբ. տուն 8
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570063611560100
ՀՎՀՀ 03309254

Տնօրեն՝

_____ Հ. Լևոնյան
(ստորագրություն) Կ.Տ.